DOI: 10.61760/18290108-ksm.25.4-35

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽԱՂԱՂԱՊԱՀԱԿԱՆ ՕՊԵՐԱՑԻԱՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԴՐԱՆՑ*

Տ. Տ. ՔՈՉԱՐՅԱՆ, գնդապետ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի պետի՝ կրթության և գիտության գծով տեղակալ – ԱՈՀԻ-ի պետ, Մ. Ա. ՇԻՐԻՆՅԱՆ, ՀՀ ԶՈՒ-ի պաշտոնաթող գեներալ-մայոր

Ներածություն

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո մի շարք պատճառներով, որոնց թվում էր նաև միջուկային զենքի ի հայտ գալը՝ իր զսպող ներուժով, մարդկությանը հաջողվում էր խուսափել նոր համաշխարհային պատերազմներից: Սակայն դրանց փոխարինելու եկան բազմաթիվ տեղային, կամ «փոքր», պատերազմներն ու զինված հակամարտությունները: Առանձին պետություններ, դրանց դաշնադրությունները, ինչպես նաև պետությունների ներսում տարբեր հասարակական-քաղաքական և կրոնական խմբավորումներ զենքի օգտագործմամբ ուժ կիրառեցին տարածքային, քաղաքական, տնտեսական, էթնոկրոնական և այլ խնդիրներ ու վեճեր լուծելու համար[1]:

Աշխարհաքաղաքական «կշեռքի նժարների» հավասարակշռությունը փոխարինվեց միջազգային իրադրության կտրուկ ապակայունացմամբ, առանձին պետություններում ծածուկ լարվածության սրումներով: Մասնավորապես՝ խիստ բարդանում էին ազգամիջյան և էթնոկրոնական հարաբերությունները, ինչն էլ իր հերթին դարձավ բազմաթիվ տեղային պատերազմների ու զինված հակամարտությունների պատճառ:

Մարդկության պատմության այժմյան փուլում աշխարհաքաղաքական և աշխարհառազմավարական իրադրության զարգացման միտումների վերլուծությունը հնարավորություն է տալիս այն գնահատելու որպես ճգնաժամային-անկայուն: Ուստի միանգամայն ակնհայտ է, որ բոլոր զինված հակամարտությունները, անկախ դրանց ինտենսիվությունից և տեղափակման աս-

* Հոդվածն ստացվել է 16.06.2025: Հոդվածի գրախոսությունն ստացվել է 12.10.2025:

[1] Տես *Н. Я. Шепова.* Миротворчество как способ предотвращения и урегулирования современных вооруженных конфликтов. «Отечественные записки», 2005, № 5 (https://magazines.gorky.media/oz/2005/5/mirotvorchestvo-kak-sposob-predotvrashheniya-i-uregulirovaniya-sovremennyh-vooruzhennyh-konfliktov.html):

տիճանից, պահանջում են անմիջական կարգավորում, իսկ իդեալական տարբերակով՝ լիակատար լուծում: Նման «փոքր» պատերազմների կանխարգելման, վերահսկման և կարգավորման փորձված միջոցներից մեկը տարբեր ձևերի խաղաղապահությունն է:

Խաղաղապահական օպերացիաները որպես կոլեկտիվ անվտանգային քաղաքականության դրսևորումներ

Խաղաղապահությունը Միավորված ազգերի կազմակերպության և այլ միջազգային կազմակերպությունների ուժերով և միջոցներով ձեռնարկվող գործողություն է՝ ամբողջ աշխարհում միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը պահպանելու համար: Խաղաղապահական օպերացիաները* *(peacekeeping; операции по поддержанию мира)* ձեռնարկվում են հակամարտային կամ հետհակամարտային գոտիներում, որտեղ տվյալ պետություններն ի վիճակի չեն ինքնուրույն կերպով ապահովելու անվտանգությունը և պահպանելու հասարակական կարգը, ինչն սպառնում է միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը[2]: Տվյալ օպերացիաները սերտորեն կապված են խաղաղության ապահովմանն ուղղված գործողությունների հարացույցի մյուս բաղադրիչների հետ, որոնք են խաղաղարարական օպերացիաները *(peacemaking operations; миротворческие операции),* խաղաղության պարտադրման օպերացիաները *(peace enforcement operations; операции по принуждению к миру)* և խաղաղաշինական օպերացիաները *(peacebuilding operations; операции по миростроительству):* Խաղաղության ապահովմանն ուղղված նշված գործողությունները փոխլրացնող են, և դրանցով նախատեսվում է, համապատասխանաբար, հրադադարի ռեժիմի պահպանում, աջակցություն հակամարտության լուծմանը բանակցությունների, միջնորդության կամ արբիտրաժի միջոցով, ինչպես նաև խաղաղության ամրապնդմանը միտված այնպիսի երկարաժամկետ ձեռնարկումներ, ինչպիսիք են անվտանգության ոլորտի բարեփոխումը, զինաթափումը, անցումային շրջանում օրենքի գերակայության ապահովումը և այլն:

Խաղաղապահական օպերացիաների խնդիրները պաշտոնապես չեն ներառում հակամարտության քաղաքական լուծում, այսինքն՝ դրա առաջացման պատճառների վերացում, ինչը քաղաքական-դիվանագիտական խնդիր է: Սակայն, որպես այդպիսին, նմանատիպ միջոցառումները ռազմական ու ռազմաքաղաքական բաղադրիչի հետ զուգահեռաբար, ներառում են նաև

* Մասնագիտական գրականությունում *«խաղաղապահական»* և որպես դրա համարժեք անգլերեն *“peacekeeping”* ու ռուսերեն *“миротворческий”* տերմինները հաճախ օգտագործվում են խաղաղագործական գործողությունների ամբողջ սպեկտրը անվանելու համար, ինչը պայմանավորված է խաղաղարարական, խաղաղապահական, խաղաղության պարտադրման և խաղաղաշինական գործողությունների գաղափարական միասնությամբ:

[2] Տես “United Nations Peacekeeping Operations: Principles and Guidelines”, 2008 (https://www.refworld.org/policy/legalguidance/un/2008/en/58423):

բազմավեկտոր անվտանգային գործելակերպը: Մասնավորապես՝ գրեթե անհնար է առանց հակամարտության հիմք դարձած խնդրի գիտակցման ակնկալել խաղաղապահական օպերացիայի լիակատար արդյունավետությունը: Հետևապես պետք է ռազմական բաղադրիչի հետ համադրված լինեն ակտիվ դիվանագիտական ու քաղաքական գործիքներ՝ ինչպես հակամարտությունը հնարավոր չափով շտապ ու լիովին հարթելու, այնպես էլ հետևանքները վերացնելու և անհրաժեշտ կենսապայմաններ երաշխավորելու հարցերում:

Ավանդական խաղաղապահական օպերացիաները հիմնականում ձեռնարկվում են երկու ձևով՝ անզեն ռազմական դիտորդական առաքելությունների և խաղաղապահ զինված ուժերի միջոցով: Այս ուժերը սովորաբար ներառում են թեթև զինված ռազմական թվակազմ՝ հատկացված այն պետություններից, որոնք իրենց պատրաստակամությունն են հայտնել մասնակցելու տվյալ նախաձեռնությանը: Բացի այդ, գործողություններում երբեմն ներգրավվում է քաղաքացիական անձնակազմը:

Ավանդական գործողությունների ծավալման հիմնարար պահանջների պահպանումից բացի (բոլոր հակամարտող կողմերի համաձայնություն, կողմերի հրադադարի համաձայնագրի կնքում, զենքի կիրառում միայն ինքնապաշտպանության նպատակով), ենթադրվում է նաև խաղաղապահ ուժերի (առաքելությունների) անձնակազմի չեզոքություն և անկողմնակալություն:

Մի շարք խաղաղապահական օպերացիաներ հնարավորություն են տվել տեղափակելու հակամարտությունը, գործելու ընդհանուր զսպող ու կայունացնող ազդեցություն և պայմաններ են ստեղծել խաղաղ ճանապարհով դրա կարգավորման կամ լուծման համար: Երբեմն հնարավոր էր լինում դրանց միջոցով երկար ժամանակով «սառեցնել» կամ «պահարկել (կոնսերվացնել)» հակամարտությունը:

Տարիների ընթացքում ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը, հիմնվելով Կանոնադրության 7-րդ գլխի դրույթների վրա և առաջնորդվելով խաղաղագործության սկզբունքներով, տարածաշրջանային կազմակերպություններին և պետությունների դաշնադրություններին թույլ տվեց ռազմական ուժ կիրառել Իրաքում, Սոմալիում, նախկին Հարավսլավիայում, Ռուանդայում, Հայիթիում:

Չափազանց կարևոր է, որ ՄԱԿ-ի ռազմական ուժային օպերացիաներ վարելու լիազորությունների փոխանցումը կատարվի միջազգային իրավական նորմերի և, մասնավորապես, նման ձեռնարկումները թույլատրելու Անվտանգության խորհրդի բացառիկ իրավունքի համաձայն: ՄԱԿ-ի Կանոնադրության 8-րդ գլխի 53-րդ հոդվածը հստակ կերպով սահմանում է, որ նման հարկադրական գործողություններ չեն կարող ձեռնարկվել «առանց Անվտանգության խորհրդի լիազորությունների»[3]: Այդ իսկ պատճառով, օրինակ,

[3] «Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրություն», հոդ. 53: Կանոնադրությունը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1992 թվականի մարտի 2-ից (Գլխավոր ասամբլեայի 46/227 բանաձև) (https://www.arlis.am/hy/acts/75801/latest):

ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների ռազմական գործողությունները Սերբիայի (1999 թ.) նկատմամբ վիճարկելի են օրինապատշաճ և արդարացված համարվելու առումով՝ անկախ մարդու իրավունքները պաշտպանելու և ժողովրդավարական հասարակություն ստեղծելու կամ դրա արժեքները պահպանելու հարցում ուժային միջամտության անհրաժեշտությամբ արդարացումներից:

Բայց նույնիսկ եթե տարածաշրջանային համաձայնագրերի կիրառմամբ խաղաղապահական օպերացիաներն իրագործվում են ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշմամբ, ինչպիսին է, օրինակ, «Փոթորիկ անապատում» օպերացիան Պարսից ծոցում (1990–1991 թթ.), պետք է հաշվի առնել, որ դրանք անմիջականորեն ղեկավարում է ոչ թե ՄԱԿ-ը, այլ որևէ մի պետություն (տվյալ դեպքում՝ ԱՄՆ-ը): Ըստ այդմ մեկ պետության ձեռքում հարկադրական ռազմական օպերացիայի հրամանատարության և վերահսկման կենտրոնացումը անխուսափելիորեն հանգեցնում է այդ գործողությունների վրա տվյալ պետության քաղաքական կողմնակալության և ձգտումների անսահմանափակ ազդեցության:

Քաղաքական և գաղափարական համակարգերի առճակատման համատեքստում խաղաղություն պահպանելու ինչպես ՄԱԿ-ի, այնպես էլ միջազգային հարաբերությունների այլ սուբյեկտների հիմնական նպատակն է ամբողջ աշխարհում ծագող հակամարտությունների զսպումը և դրանց մարումը հենց օջախում, քանի դեռ դրանք չեն հասցրել տեղայինից վերաճել տարածաշրջանային կամ համընդհանուր մակարդակի, ինչն իր հերթին կհանգեցներ այդ գործողություններում գերտերությունների ներգրավմանը:

Ինչպես արդեն նշվեց, «Սառը պատերազմի» ավարտով աշխարհում խաղաղապահական գործողությունների թիվը կտրուկ կերպով աճեց, և այդ իսկ պատճառով խաղաղապահությունն սկսեց ավելի մեծ ուշադրություն գրավել հետազոտողների շրջանում: Այս ժամանակաշրջանի ամենանշանավոր հեղինակներից պետք է հիշատակել ամերիկացի հակամարտաբան Փոլ Դիելին, որը հիմնականում ուսումնասիրել է հակամարտությունների կառավարման խնդիրները՝ վերլուծելով խաղաղապահական առաքելության հաջողության չափանիշներն ու գործոնները[4]:

Աստիճանաբար սկսեցին ձևավորվել երկու հետազոտական ուղղություններ, որոնցից մեկը նվիրված էր հրադադարի խնդիրներին, իսկ մյուսը՝ հակամարտության հիմքում եղած պատճառների վերացմանն ու երկարաժամկետ հաշտեցմանը (այսինքն՝ խաղաղության հաստատմանը): Երկրորդ ուղղությունը ակտիվորեն զարգացնող առաջատար հետազոտական կենտրոններից է Նորվեգիայի Միջազգային հարաբերությունների ինստիտուտը[5]:

1976 թ. ամերիկացի ռազմական սոցիոլոգ Չ. Մոսկոսն ուշադրություն

[4] Տես *P. F. Diehl.* International Peacekeeping. Johns Hopkins University Press, 1993, P. 112:

[5] Տես “Peacebuilding and Police Reform”. Ed. by T. T. Holm, E. B. Eide. London, 1999, P. 24:

հրավիրեց այն փաստի վրա, որ խաղաղապահական առաքելությունների հաջողությունը խաթարող գործոններից մեկը ՄԱԿ-ի խաղաղապահների շարքերում տարբեր պետությունների ներկայացուցիչների միջև եղած սոցիոմշակութային տարբերությունն է[6]: Մեկ տասնամյակ անց նորվեգացի փորձագետներ Մ. Հեյբերգը և Ջ. Հոլստը կրկին անդրադարձան նրանց փոխհարաբերությունների վերլուծությանը՝ շեշտելով այն հակասությունների բացասական դերը, որոնք առաջանում են կրոնական և տնտեսական զարգացման մակարդակով էապես տարբերվող պետությունների ներկայացուցիչների միջև[7]:

Արդի ժամանակներում «խաղաղության պահպանման օպերացիաները» նախատեսում են ոչ այնքան ռազմական բնույթի գործողություններ, որքան մարդասիրական, որոնք ձեռնարկվում են հակամարտության երկու կողմերի համաձայնությամբ[8]: Միջազգային խաղաղապահական առաքելությունների նպատակներում ներառվել է նաև հակամարտող կողմերին ցուցաբերվող աջակցությունը նրանց պարտավորությունների կատարման, ինչպես նաև դրանց նկատմամբ վերահսկողության գործում: Այդ առաքելությունները կոչված են աջակցելու դիվանագիտական խմբերի աշխատանքին՝ իրավիճակի երկարաժամկետ կարգավորման եղանակներ գտնելու համար:

Ծայրահեղ դեպքերում գործողությունները կարող են ներառել հակամարտության մեջ ներքաշված կողմերի նկատմամբ ուժի կիրառում կամ ուժ կիրառելու մտադրության մասին հայտարարություն: Նման առաքելությունների հիմնական խնդիրն է հակամարտող կողմերին ստիպել հրաժարվել բռնի գործողություններից և նստել բանակցային սեղանի շուրջ կամ կատարել նախկինում ընդունված բանաձևերի պայմանները, որոնք ուղղված են որոշակի տարածաշրջանում իրավիճակի կայունացմանն ու խաղաղության հաստատմանը կամ պահպանմանը[9]:

Խաղաղության պահպանման օպերացիաների շրջանակներում նախատեսվում են մի շարք միջոցառումներ նույնիսկ մինչև ճգնաժամային իրավիճակի զարգացումը այն կանխելու և բռնության կիրառման շրջանը սահմանափակելու նպատակով: Իսկ ռազմական միջոցառումներ իրականացվում են բացառապես անվտանգության ապահովման համար[10]:

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր Օ. Ա. Բելկովն առաջարկում

[6] Տես *Ch. Moskos.* Peace Soldiers: The Sociology of a United Nations Military Force. Chicago, 1976, P. 71:

[7] Տես *M. Heiberg, J. Holst.* Keeping the Peace in Lebanon: Assessing International and Multinational Peacekeeping. Oslo, 1986, P. 19:

[8] Տես *И. Р. Ютяева.* Миротворческая деятельность ООН в Африке: проблемы и перспективы. М., 2024, с. 66 (https://mgimo.ru/upload/diss/2024/yutyaeva-diss.pdf):

[9] Տես “Joint Pub. 3-07. Joint Doctrine for Military Operations Other Than War”. Joint Chiefs of Staff, 16 June 1995, P. 41 (https://www.bits.de/NRANEU/others/jp-doctrine/jp3_07.pdf):

[10] Տես “Joint Publication 3-57. Civil-Military Operations”. Joint Chiefs of Staff, 9 July 2018, P. 31 (https://www.jcs.mil/Portals/36/Documents/Doctrine/pubs/jp3_57.pdf):

է միջազգային խաղաղապահություն ասելով հասկանալ այն գործողությունների ամբողջությունը, որոնք ուղղված են հակամարտությունների կողմերի լրիվ կամ մասնակի զինաթափմանը, փոխվստահության ձեռքբերմանը, ինչը աշխարհի կոնկրետ վայրերում անվտանգության վերականգնման կամ պահպանման նպատակով անմիջականորեն կատարում են ՄԱԿ-ը կամ առանձին պետություններ՝ միջազգային հանրության հանձնարարությամբ[11]:

Խաղաղարարական մոտեցումները հնարավորություն են ստեղծում ճկուն և համալիր կերպով ազդելու հակամարտության վրա՝ բռնությունը կանխելու նպատակով: Ավելին. խաղաղապահները և միջազգային հանրության ներկայացուցիչները հնարավորության դեպքում պետք է փորձեն «կոտրել» և փոխել հակամարտող կողմերի հարաբերություններում միմյանց նկատմամբ ձևավորված կարծրատիպերը, որոնք արտահայտվում են ծայրահեղ թշնամանքի, անհանդուրժողության, վրիժառության և անհաշտության ձևով, ինչը բազմաթիվ հանգամանքների բերումով, որպես կանոն, չի հաջողվում լիարժեք կերպով անել: Միջազգային հանրության խաղաղապահական ջանքերի արդյունավետության մեծացման համար, ընդհանուր առմամբ, անհրաժեշտ է ավելի մեծ ուշադրություն դարձնել զինված հակամարտության առաջացումը, կամ «բռնկումը», կանխարգելելու, ինչպես նաև ռազմական գործողությունները կանխելու վրա այնտեղ, որտեղ դրանք դեռ չեն սկսվել: Ի վերջո, հայտնի է, որ «հիվանդությունը կանխարգելելը շատ ավելի հեշտ և էժան է, քան բուժելը»:

Կարևոր է նաև, որ խաղաղապահական օպերացիաներում պահպանվեն հիմնարար միջազգային իրավական նորմերը, չխախտվեն մարդու և ինքնիշխան պետությունների իրավունքները: Բայց որոշ դեպքերում խաղաղապահները, պաշտպանելով մարդու իրավունքները, իրենք են խախտում դարերի ընթացքում ձևավորված և մինչև վերջերս անսասան համարվող պետության ինքնիշխանությունը, դրսից ներքին գործերին չմիջամտելու իրավական պահանջը: Այս համատեքստում միանգամայն անթույլատրելի է, որ խաղաղության և անվտանգության համար պայքարի կամ մարդու իրավունքների պաշտպանության կարգախոսով ձեռնարկված արտաքին միջամտությունը վերածվի որևէ պետության ներքին գործերին բացահայտ զինված միջամտության՝ հակառակ նրա կամքի:

Հարկ է նշել, որ ներկայումս ՄԱԿ-ը խաղաղարարական գործունեություն ծավալող միակ կառույցը չէ: Առանձին տարածաշրջաններում պետությունների միջև հարաբերությունների կարգավորման և խաղաղության հաստատման գործընթացներում ներգրավված են ՆԱՏՕ-ն, Եվրոպական Միությունը, Աֆրիկյան միությունը և այլ միջազգային կազմակերպություններ: Մասնավորապես՝ մի շարք օպերացիաներ ձեռնարկվել կամ իրագործվում են Աֆրիկյան միության կամ ենթատարածաշրջանային ասոցիացիաների հովանու ներքո:

[11] Տես *О. А. Бельков.* Миротворчество: диалектика мирных и военных средств. «Обозреватель», 1997, № 3-4 (https://www.observer-journal.ru/jour/search/search?simpleQuery_input):

Միևնույն ժամանակ, աֆրիկյան խաղաղապահների համար հրատապ խնդիր է ֆինանսավորումը, քանի որ դրա մեծ մասը տրամադրում են արևմտյան կամ եվրոպական դոնորները: Հետևապես՝ Անվտանգության և պաշտպանության ընդհանուր քաղաքականության *(Common Security and Defence Policy, CSDP)* համաձայն ԵՄ-ն առաջատար դեր է խաղում խաղաղության պահպանման, հակամարտությունների կանխարգելման և միջազգային անվտանգության ամրապնդման առաքելություններում:

Այս քաղաքականության շրջանակներում ԵՄ-ն իր առաջին օպերացիան ձեռնարկել է 2003 թ., որից հետո նախաձեռնել է ևս 40 օպերացիաներ Եվրոպայի, Աֆրիկայի և Ասիայի մի շարք պետություններում: Այսօրվա դրությամբ իրագործվում են 21 առաքելություններ և օպերացիաներ, այդ թվում՝ 12 քաղաքացիական, 8 ռազմական և մեկ ռազմա-քաղաքացիական նախաձեռնություն: ԵՄ-ի քաղաքացիական օպերացիաներից մեկը տեղի է ունենում միջազգայնորեն ճանաչված հայ-ադրբեջանական սահմանի երկայնքով՝ Հայաստանի տարածքում[12]:

Հայաստանը միջազգային խաղաղապահական գործունեության ասպարեզում

Հայաստանում ԵՄ-ի առաքելությունը (ԵՄԱՀ) հիմնադրվել է ԵՄ-ի արտաքին գործերի խորհրդի 2023 թ. փետրվարի 20-ի որոշմամբ: Առաքելության առջև խնդիր է դրված դիտել իրավիճակը տեղերում և այդ մասին զեկուցել՝ նպաստելով հակամարտությունից տուժած տարածքներում մարդկանց անվտանգության ապահովմանը և, հնարավորության դեպքում, աջակցելով Հայաստանի և Ադրբեջանի միջև վստահության ամրապնդմանը: ԵՄ-ն իր առաքելությունն ստեղծել է ի պատասխան տեղում ԵՄ-ի լիարժեք քաղաքացիական առաքելություն տեղաբաշխելու վերաբերյալ Հայաստանի իշխանությունների պաշտոնական խնդրանքի: Դա հաջորդում է Հայաստանում Եվրոպական Միության մշտազննման քաղաքացիական խմբի (ԵՄՄՔԽ) տեղաբաշխմանը, որ համաձայնեցվել էր 2022 թ. հոկտեմբերի 6-ին և պաշտոնապես գործարկվել 2022 թ. հոկտեմբերի 20-ին: ԵՄՄՔԽ մանդատն ավարտվել է 2022 թ.: Այն ներառում էր աշխատանքներ Հայաստանի և Ադրբեջանի միջազգային սահմանի սահմանազատման սահմանային հանձնաժողովների հետ, ինչպես նաև ջանքեր՝ ուղղված տարածքում խաղաղության և անվտանգության վերականգնմանը և երկու պետությունների միջև ընդհանուր վստահության ձևավորմանը[13]:

Հայաստանում ԵՄ-ի առաքելության մանդատն ի սկզբանե նախատեսված էր երկու տարվա համար և պետք է ներառեր մինչև 209 աշխատող, այդ

[12] Տես “What we do: Policies and actions Missions and Operations”, 30.01.2025 (https://www.eeas.europa.eu/eeas/missions-and-operations_en):

[13] Տես “EU Monitoring Capacity to Armenia”, 20.10.2022 (https://www.eeas.europa.eu/eeas/eu-monitoring-capacity-armenia_en):

թվում՝ 165 օտարերկրացի և 44 տեղացի: Առաքելության կենտրոնականը գտնվում է Եղեգնաձորում, իսկ վեց առաջադիր օպերատիվ կայանները՝ Եղեգնաձորում, Ձերմուկում, Մարտունիում, Կապանում, Գորիսում և Իջևանում: Առաքելությունն ունի նաև կապի գրասենյակ Երևանում: Հետագայում դիտորդական առաքելության ժամկետը երկարաձգվել է ևս երկու տարով՝ մինչը 2027 թ. փետրվարի 19-ը, իսկ կազմը մնալու է անփոփոխ[14]:

Բացի նշվածից, հարկ է փաստել, որ Հայաստանի Հանրապետության Զինված ուժերը նույնպես իրենց ներդրումն են ունեցել միջազգային խաղաղապահության ձևավորման և դրան աջակցության գործում՝ սկսած 2004 թ. փետրվարից: Այդ ժամանակ 34 հոգուց բաղկացած զորաջոկատը մեկնել է Կոսովո, որպեսզի հունական ստորաբաժանման կազմում կատարի խաղաղապահական առաքելություն:

Հաջորդ տարվա հունվար ամսին ՀՀ ԶՈՒ-ի խաղաղապահական ստորաբաժանումները, այս անգամ լեհական ստորաբաժանման կազմում, մասնակցել են Իրաքում անցկացվող բազմազգ առաքելությանը: Այստեղ հայ խաղաղապահները հիմնականում ներգրավված են եղել ականազերծման, բժշկական ապահովման և մարդասիրական բեռնափոխադրումների գործում: Այստեղից հայ խաղաղապահները դուրս են բերվել 2009 թ. նոյեմբերին:

2010 թ. փետրվար ամսից սկսած՝ ՀՀ խաղաղապահների մեկ դասակ, գործելով Գերմանիայի Դաշնային Հանրապետության հրամանատարության ներքո, եղել է Աֆղանստանում միջազգային անվտանգությանն աջակցման ուժերի կազմում: Այստեղ նա, ընդգրկվելով հյուսիսային հրամանատարության կազմում, կատարել է Կունդուզ քաղաքի օդանավակայանի անվտանգության ապահովման խնդիրները, ինչպես նաև այդ նույն թվականից ծառայել է Քաբուլում, Կունդուզում, Մազարի Շարիֆում գտնվող զինվաններում:

Մեկ այլ ոչ պակաս նշանակալից առաքելությունում՝ Լիբանանում, նույնպես ներգրավված են եղել հայ խաղաղապահներ, որոնց ծառայությունն սկսվել է 2014 թ. դեկտեմբերին:

Այսպիսով՝ կարելի է շեշտել, որ հայ խաղաղապահները բազմիցս ներգրավվել են տարբեր միջազգային խաղաղապահական օպերացիաներում, բարձր պահել Հայաստանի՝ որպես անվտանգային համակարգի դերակատարի պատիվը և ապահովել նրա համեստ ներդրումը[15]:

ՀՀ անվտանգային միջավայրի գնահատման և արտաքին բազմակողմ գործակցության համատեքստում կարևոր է նաև համառոտակի ներկայացնել Ռուսաստանի՝ որպես խաղաղապահ դերակատարի և հետխորհրդային տարածությունում նրա իրագործած խաղաղապահական առաքելությունների վերլուծությունը: Մասնավորապես՝ ԽՍՀՄ փլուզումից հետո Ռուսաստանն

[14] Տես “About EU Mission in Armenia”, 01.03.2025 (https://www.eeas.europa.eu/euma/about-european-union-mission-armenia_en?s=410283):

[15] Տես «Խաղաղապահ առաքելություններ»: ՀՀ պաշտպանության նախարարություն (https://www.mil.am/hy/pages/37):

առաջատար դեր էր խաղում ԱՊՀ ամբողջ տարածքում խաղաղապահական նախաձեռնությունների իրացման գործում: Գերակշռող դեպքերում այդ օպերացիաները սահմանափակվում էին հակամարտող կողմերին ռազմական գործողությունները դադարեցնելու «հորդորներով» և դրանց լուծման համար բազմակողմ ձևաչափեր ստեղծելու փորձերով: Սակայն մի շարք գործոնների պատճառով սովորաբար հնարավոր չէր լինում ստեղծել լիովին արդյունավետ ձևաչափեր[16]: Հետխորհրդային տարածաշրջանում իրագործված առաջին խաղաղապահական օպերացիան, որին մասնակցել են ռուսաստանյան խաղաղապահները, Մերձդնեստրյան հակամարտությունն էր: Նրանք այստեղ տեղաբաշխվել են 1992 թ. հուլիսին[17], նույն թվականի ամռանը ուղարկվել են Հարավային Օսեթիա, իսկ երկու տարի անց՝ ամռանը, Աբխազիա: Հարկ է նշել նաև 1992–1997 թթ. Տաջիկստանում տեղի ունեցած քաղաքացիական պատերազմը, որում նույնպես ներգրավվեց ՌԴ խաղաղապահների թվակազմը:

Սակայն հետխորհրդային տարածությունում լարվածությունը փաստացի շարունակում էր պարբերաբար ուժեղանալ տարբեր ուղղվածություններով, ինչը նաև որոշակիորեն նպաստեց 2020 թ. 44-օրյա պատերազմին: *2020 թ. նոյեմբերի 9-ին Ադրբեջանի ու Ռուսաստանի նախագահները և Հայաստանի Վարչապետը ստորագրեցին եռակողմ հայտարարություն, ըստ որի նոյեմբերի 10-ին Արցախում տեղակայվեցին ռուսաստանյան խաղաղապահներ, սակայն մի շարք բացահայտ և ծածուկ պատճառներով այս առաքելությունը ձախողվեց:*

«Սառը պատերազմի» ավարտից հետո ձախողվել կամ ոչ միանշանակ արդյունքներ էին ունեցել նաև ՄԱԿ-ի ձեռնարկած մի շարք խաղաղապահական գործողություններ, մասնավորապես՝ Սոմալիում (1992–1995 թթ.), Ռուանդայում (1993–1996 թթ.), Անգոլայում (1995–1997 թթ.), Խորվաթիայում (1996–1998 թթ.), Սուդանում (2005–2011 թթ.): Կարևոր է նկատել, որ այս առաքելությունների ձախողումը պայմանավորված էր այն մեծ վտանգներով ու ռիսկերով, որոնց առկայության պայմաններում ծավալվում էր խաղաղապահների գործունեությունը, սակայն առավելապես՝ մի շարք պրոբլեմներով, ինչպիսիք էին, օրինակ, միջազգային քաղաքական զարգացումները, իրավանորմատիվային բացերը, ֆինանսական, կազմակերպական դժվարությունները, տեխնիկական և մարդկային ռեսուրսներով ապահովման, թեժ մարտական իրադրության պահպանման հետ կապված պրոբլեմները: Միևնույն ժամանակ, ՄԱԿ-ի ձեռնարկած մեծ թվով խաղաղապահական օպերացիաներ, օրինակ՝ Նամիբիայում (1989–1990 թթ.), Սիեռա Լեոնեում (1999–

[16] Տես *С. Д. Кавтарадзе.* Этнополитические конфликты на постсоветском пространстве. М., 2005, с. 124:

[17] Տես *Ф. Л. Бражалович, М. И. Ключников, Н. Л. Туров.* Российская миротворческая операция в Приднестровье: прошлое и настоящее. «Вестник Пермского университета». Серия: Политология, 2016, № 2 (https://cyberleninka.ru/article/n/rossiyskaya-mirotvorcheskaya-operatsiya-v-pridnestrovie-proshloe-i-nastoyaschee):

2006 թթ.), Փղոսկրյա ափում (2004–2017 թթ.), Լիբերիայում (2003–2018 թթ.), կարելի է գնահատել որպես արդյունավետ: Այս և այլ խաղաղապահական օպերացիաների փորձի վերլուծությունը վկայում է, որ հակամարտության լուծման հարցում նպատակային համախմբվածությունը և դրա կարգավորման գործում կայուն միջազգային ներկայությունը խաղաղ բնակչության անվտանգության ապահովման, բռնության կանխարգելման և կանխման կարևոր պայմաններ են:

Եզրակացություն

Աշխարհաքաղաքական և աշխարհառազմավարական զարգացումների ներկայիս փուլում խաղաղապահական օպերացիաները կոլեկտիվ անվտանգության ոլորտի քաղաքականության այն գործիքներն են, որոնք հնարավորություն են տալիս տեղափակելու հակամարտությունները և զգայուն միջավայրում գործելու զսպող ազդեցություն: Խաղաղապահական առաքելությունները, մասնավորապես՝ ՄԱԿ-ի հովանու ներքո իրագործվող օպերացիաները, դրսևորում են նաև հետհակամարտային հասարակությունների բնականոն կյանքը կայունացնելու, քաղաքական երկխոսության համար պայմաններ ստեղծելու և մարդասիրական գործունեություն ծավալելու զգալի ներուժ: Ըստ այդմ, բարդ իրադրությունում հակամարտող կողմերի միջև քաղաքական երկխոսության ապահովման, պետական կառավարման կայուն համակարգերի ստեղծման, մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցառումների իրականացման, նախկին կոմբատանտների զինաթափման և նրանց վերաինտեգրման գործողությունների համար պահանջվում է ռազմական և դիվանագիտական բաղադրիչների խելացի համակցում:

Ներկայումս առանձին տարածաշրջաններում պետությունների միջև հարաբերությունների կարգավորման և խաղաղության հաստատման գործընթացներում ներգրավված են ՆԱՏՕ-ն, Եվրոպական Միությունը, Աֆրիկյան միությունը և այլ միջազգային կազմակերպություններ: Այս կապակցությամբ անհրաժեշտ է շեշտել, որ հստակ և օրինաչափ կերպով ձևակերպված մանդատը, միջազգային հանրության աջակցությունը, երկարաժամկետ անկողմնակալ ռազմավարությունը շարունակում են մնալ առաքելությունների հաջողության կարևոր նախապայմաններ, և ի հակադրություն նշվածին՝ ոչ բավարար համակարգվածության, խնդիրների քաղաքականացումը կամ մեկ պետության շահերից կախվածությունը կարող են զգալիորեն նվազեցնել ներդրվող ջանքերի և գործողությունների արդյունավետությունը:

Միջազգային խաղաղապահության ձևավորման գործում իր ներդրումն ունի նաև Հայաստանի Հանրապետությունը: ՀՀ ԶՈՒ-ի խաղաղապահական ստորաբաժանումները բազմիցս ներգրավվել են միջազգային խաղաղապահական օպերացիաներում՝ բարձր պահելով Հայաստանի՝ որպես միջազգային անվտանգային համակարգի ակտիվ դերակատարի և միջազգային համագործակցության վստահելի սուբյեկտի վարկանիշը:

МЕЖДУНАРОДНЫЕ ОПЕРАЦИИ ПО ПОДДЕРЖАНИЮ МИРА И УЧАСТИЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В НИХ

Т. Т. КОЧАРЯН, полковник, доктор политических наук, профессор, заместитель Начальника по образованию и науке НИУО МО РА – Начальник ИНСИ;
М. А. ШИРИНЯН, генерал-майор ВС РА в отставке

РЕЗЮМЕ

На нынешнем этапе международных геополитических и геостратегических процессов операции по поддержанию мира являются теми инструментами политики коллективной безопасности, которые позволяют локализовать конфликты и оказывать сдерживающее влияние в чувствительной среде военно-политической напряженности. Миссии по поддержанию мира, в частности, операции, осуществляемые под эгидой ООН, демонстрируют свой значительный потенциал и по стабилизации нормальной жизни постконфликтных обществ, созданию условий для политического диалога и осуществления гуманитарной деятельности. В соответствии с этим, действия по обеспечению политического диалога между сторонами конфликта в условиях сложной военно-политической, социально-экономической и общественно-государственной обстановки, созданию устойчивых систем государственного управления, осуществлению мер по защите прав человека, разоружению бывших комбатантов и их реинтеграции требуют разумного сочетания военного и дипломатического компонентов.

В настоящее время в процессах урегулирования отношений и установления мира между государствами в отдельных регионах, помимо ООН, участвуют НАТО, Европейский Союз, Африканский союз и другие международные организации. В этой связи необходимо подчеркнуть, что четкий и правомерно сформулированный мандат, поддержка международного сообщества, осуществляемая долгосрочная беспристрастная стратегия по-прежнему являются важными предпосылками для успеха миссий, и, в отличие от упомянутого, недостаточная скоординированность, политизация задач или зависимость от интересов одного государства могут значительно снизить эффективность прилагаемых усилий и действий.

Свой вклад в формирование международного миротворчества вносит и Республика Армения. Миротворческие подразделения ВС РА неоднократно привлекались к международным операциям по поддержанию мира, сохраняя высокое реноме Армении как активного актора международной системы безопасности и надежного субъекта международного сотрудничества.

INTERNATIONAL PEACEKEEPING OPERATIONS AND THE REPUBLIC OF ARMENIA'S PART IN IT

T. T. KOCHARYAN, Colonel, Doctor of Political Science, Professor, Deputy Head in Education and Research, NDRU, MOD, RA – Head, INSS;
M. A. SHIRINYAN, Major General (Ret.) of the RA Armed Forces

SUMMARY

At the current stage of international geopolitical and geostrategic processes, peacekeeping operations are the tools for collective security policy that help localize conflicts and exert a deterrent effect in sensitive areas of military and political tension. Peacekeeping missions, in particular, the operations carried out under the auspices of the UN, showcase their significant potential for stabilizing the normal living of post-conflict societies, creating prerequisites for political dialogue, and implementing humanitarian activities. In line with it, efforts aimed at facilitating political dialogue between parties to a conflict in complex military-political, socioeconomic, and public-governmental environment, building sustainable systems of public administration, implementing measures to protect human rights, and disarming and reintegrating former combatants require a rational combination of military and diplomatic components.

In addition to the UN, currently, NATO, the European Union, the African Union, and other international organizations are involved in the processes of regulating relations and establishing peace between states in certain regions. In this regard, it is of key importance to highlight that a clearly and legitimately formulated mandate, the international community support, and a long-term, impartial strategy remain crucial prerequisites for the mission success. Alte*r*natively, poor coordination, politicization of tasks, or reliance on the interests of a single state can significantly reduce the effectiveness of efforts and actions taken.

On its part, the Republic of Armenia does contribute to the development of international peacekeeping. Peacekeeping units of the Armenian Armed Forces have repeatedly been engaged in international peacekeeping operations, upholding Armenia reputable as an active player in the international security system and a reliable subject in international cooperation.